

**ՂԱՍՍԱՆ ՄՈՒԽԱՅՊԷՐ
ՅԱՅՏԱՐԱՐԵՑ
ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ՝ ՄԵԹՆԻ
ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ**

Երեսփոխան Ալյէր Մուխայպէրի թափուր մնացած աթոռին համար երէկ պաշտօնապէս թեկնածուութիւն դրաւ ընտանիքի անդամ՝ Ղասսան Մուխայպէր, որ այսպիսով ցարդ հանդիսացաւ պաշտօնական երկրորդ թեկնածուն՝ Կապրիէլ Մըրիէն ետք: Ղասսան Մուխայպէր իր ընտրական փյաթֆորմը պիտի յայտարարէ աւելի ուշ:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆԴՈՒՆԵՑ ԶԵՆԹՐՊԸՐԻԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ**

Երէկ, 29 Ապրիլ 2002ին, Արամ Ա. կաթողիկոս ընդունեց Անկլիքան եկեղեցւոյ պետին՝ Քենթրպըրիի արքեպիսկոպոսին ներկայացուցիչը, որ Անկլիքան եկեղեցւոյ հոգեւոր պետին կողմէ անձնական նամակ մը փոխանցեց վեհափառ հայրապետին: Իր նամակին մէջ արքեպիսկոպոսը կը յայտնէր Երուսաղէմ այցի իր ծրագրին եւ Անկլիքան եկեղեցւոյ կապուած շարք մը հարցեր:

Հանդիպումին ներկայ գտնուեցաւ նաեւ կաթողիկոսութեան միջեկեղեցական յարաբերութեանց պատասխանատու Նարեկ Ծ. վրդ. Ալեքեմէզեան: Ներկայացուցիչին այցելութիւնը առիթ մը եղաւ նաեւ խօսելու Միջին Արեւելքի կացութեան, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ու Անկլիքան եկեղեցւոյ փոխ յարաբերութեանց մասին:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
«ԿԻԼԻԿԻԱ» ԹՎՆԳԱՐԱՆ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ**

**Նիւթ՝
«ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻՆ ՇԵՏ»**

Կը դասախօսէ՝
ԺԱԳ Ա. ՅԱԿՈԲԵԱՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Կիլիկիա» թանգարանի յանձնարարութեամբ սիրով կը հրատարակուին մեր մտաւորականները, ուսանողները եւ գրասեր հասարակութիւնը ներկայ գտնուելու համարձանօթ բանասեր ժառ. Յակոբեանի դասախօսութեան, որ տեղի պիտի ունենայ Երեւանի 2 Մայիս 2002ին երեկոյեան ժամը 7:00ին, թանգարանի սրահին մէջ:

**ՃԵՄԱՐԱՆՆԵՐՈՒ ԾՆՈՂԱԿԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ
ԸՆԹՐԻՔԻ ԵՐԵԿՈՅ**

Ուրբաթ, 3 Մայիս 2002ին երեկոյեան ժամը 8:30էն սկսեալ «Մ. եւ Շ. Արսլանեան» ձեմարանի նորակառոյց բացօթեայ շրջափակին մէջ:
Մուտքի սակ՝ 25,000 Լ. ռ.

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ԽՐԱԽՃԱՆՔ**

(12 տարեկանէ վեր պատանիներու համար)
Շաբաթ, 4 Մայիս 2002ին երեկոյեան ժամը 9:00էն սկսեալ «Մ. եւ Շ. Արսլանեան» ձեմարանի սրահին մէջ:
Մուտքի սակ՝ 10,000 Լ. ռ.

ՀԱԼԷՊ ՄԱՀԱԶԳ

Տէր եւ տիկին Մայք Արսլանեան եւ զաւակուհի Տեառն Յովսէփի եւ ժամօ Արսլանեան
Տէր եւ տիկին Արա եւ Սօսի Պուտազեան եւ զաւակը Տիկին Ազատուհի Արսլանեան եւ զաւակուհի Տիկին Անժէլ Քէվրանեան
Տիկին Մարի Արսլանեան
եւ համայն ազգականներ կը գովեն իրենց հօր եւ հարգատիւն:

**ԲԻԻԶԱՆԴ ԱՐՍԼԱՆԵԱՆԻ
(Ծնեալ՝ 1923ին)**

անակնկալ մահը, որ պատահեցաւ Կիրակի, 28 Ապրիլ 2002ին, Քեսապի մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, 29 Ապրիլ, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Հալէպ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Հալէպի ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղծ:
● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Սուլէյմանիէ, Հալէպ, Երեքշաբթի 30 Ապրիլին եւ Չորեքշաբթի 1 եւ Հինգշաբթի 2 Մայիսին, իսկ Քեսապի բնակարանին մէջ՝ Ուրբաթ 3, Շաբաթ 4 եւ Կիրակի 5 Մայիսին:

**ԱՐԱՄ Ա. ՅԱԿՈԲՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՅՏԵ
ԿԻԼԻԿԵԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄԱՐԿՈՒՆ ԱՌԻԹՈՎ**

Կիրակի, 28 Ապրիլ 2002ին, յուղարկուորութիւնը կատարուեցաւ Լիպպոնի Գալուստ Կիլիկիական Հիմնարկութեան նախագահ՝ դոկտ. Վիքտոր Տըսա Մաշատոյի: Այս տխուր առիթով, Կիլիկիական Հիմնարկութեան խնամակալութեան ուղղած իր նամակին մէջ, Արամ Ա. կաթողիկոս մեծ կորուստ կը նկատէ Մաշատոյի մահը, հիմնարկութեան գործունէութեան համար: Անցնող տարիներու ընթացքին հանգուցեալը կարեւոր դեր ունեցած էր ու իր ներդրումը կատարած՝ Հիմնարկութեան բոլոր ծրագիրներուն իրականացման գծով:

Գնահատանքը կը յայտնէ Հիմնարկութեան Հայկական Բաժնին այնքան յայնաժամաւ գործունէութեան համար, նոյն առիթով իր օրհնութիւնը փոխանցելով Հայկական Բաժնի մունիքի պատասխանատու դոկտ. Մայքըլ

Եսայեանին եւ բաժանմունքի տնօրէն դոկտ. Չալէ Եկաեանին, որոնց բարեհաճ օժանդակութիւնները կը նպաստեն Հայաստանի թէ Սփիոքեան օժանդակութեան կողմէ իրականացուող Վերելքին՝ հայ կեանքին ներս:

**ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ
ԺՈՂՈՎ ՄԸ ԳՈՒՄԱՐԵՅ
ՄԻՇԷԼ ՄԸՐԻ ՀԵՏ**

Նախագահ գօր. Էմիլ Լահուտ երէկ Պատապոյտի մէջ ժողով մը գումարեց նախկին փոխ վարչապետ Միշէլ Մըրիի հետ: Անոնք քննարկեցին երկրին եւ շրջանին վերջին իրադարձութիւնները:

Նախագահ Լահուտ երէկ տեսակցութիւններ ունեցաւ նաեւ Քանաքոպի դեսպան Հայկ Սարաֆեանի, Գերմանիոյ դեսպան Ժիզելլա Սիբորայի եւ նախկին երեսփոխաններու հետ:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԻՐ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԻՆ ՈՐՈՇԵՅ...

Շարունակուած Ա. Էջէն կողմէ վստահուեցաւ կառավարութեան, որոշ յստակացումով:

Կենսոլորտի ապակա- նուածի հարցին անդրադարձան երեսփոխաններ Աքրամ Շըհապի, Եսայի ժապէր, Նասէր Քանտիլ, Օմար Քարամէ, Ատնան Արաբի, Ֆարիտ խազէն, Մոհամէտ Քապպանի, Մրտազ Ահտապ, Նայալ Մուրուտ, Ֆայսալ Տաուուտ, Ռոպէր Լա- նէմ, Ասիէֆ Մաժալա- նի, Մոհամէտ Ֆինչլ, Մո- համէտ Եահիա, Ժամալ Իսմայիլ, Քայսար Մուրուտ եւ Ասէմ Քան- սօ:

Կառավարութեան անունով խօսք առին նա- խարարներ Միշէլ Մուսա, Ֆուատ Սինիորա եւ Է- լիաս Մըր:

Կենսոլորտի նախա-

Շարունակուած Ա. Էջէն կողմէ Մուսա գորա- վիզ կանգնեցաւ թիւ 341 յօդուածի գործադրու- թեան՝ կենսոլորտին եւ ընդհանուր առողջապա- հութեան հաշուոյն:

Իր կարգին, ելեւմուտ- քի նախարար Ֆուատ Սինիորա յայտնեց, որ կառավարութիւնը ոչ մէկ ձեռով արգելք պիտի հան- դիսանայ խորհրդարանի տուած որոշումին գոր- ծադրութեան:

Միւս կողմէ, ներքին գործոց եւ քաղաքապե- տութեան նախարար Է- լիաս Մըր նկատի ունենա- լով թիւ 341 յօդուածի գործադրութեան կարե- լորութիւնը, դիտել տուաւ միաժամանակ, որ անոր գործադրութիւնը քաղաքացիներու որոշ դասակարգի մը մէջ ըն- կերային հարցեր եւ տագ-

նապներ պիտի ստեղծէ: Հետեւաբար Մըր պահան- ջեց աւելի երկարաձգել պայմանաժամը (մինչեւ 2002ի վերջ), որպէսզի կառավարութիւնը կարե- նայ հանրութեան փո- խադրութեան հարցը կարգաւորել:

Խորհրդարանի նախա- գահը, սակայն, մերժեց նախարար Մըրի առա- ջարկը եւ շեշտեց, որ ստուած որոշումը պէտք է գործադրուի ճշգրտած ժամանակամիջոցին:

Ժողովը փակուեցաւ առանց լիազուածարի յա- ջորդ նիստին թուական ճշգրտելու:

ՍՍԱՅԱՆՔ

● «ՅՈՒՇԵՐ Շ.Ս.Ը.Մ.ԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԵՄ 1940 - 1952»

Հեղինակ՝ ՎԱՐԳԻՎԱՌ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Փարիզ, 2000

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
«ԱՐԵՎ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ԹԱՏԵՐԱՆՈՒՄԲ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՐԱԽՃԱՆՔ
(Խանդավառ մթնոլորտ)

Շաբաթ, 4 Մայիս 2002ի երեկոյեան ժամը 8:30էն սկսեալ, «Ազատամարտ» ակումբի սրահին մէջ:
● Տոմսերը ապահովելու համար դիմել Կամազա- յիցի «Լեւոն Շանթ» կեդրոն:

**ԱՄԱՌՆԱՅԻՆ ԻՐԱՅԱՏՈՒԿ
ՔԵՐՄԷՍ**

Կազմակերպութեամբ՝
**ՃԵՄԱՐԱՆՆԵՐՈՒ
ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ**

● Աւելի քան 20 նոր եւ հետաքրքրական խաղեր:
● Անակնկալ եւ ճոխ յայտագիր փոքրերու եւ մեծերու համար:
● Տեսակաւոր ուտելիքներ:

Տեղի կ'ունենայ Շաբաթ 4 եւ Կիրակի, 5 Մայիս 2002, կէսօրէ ետք ժամը 3:00էն մինչեւ ուշ գիշեր, «Մ. եւ Շ. Արսլանեան» ձեմարանի ընդարձակ շրջափակէն ներս, Մըրի:

ՄՈՒՏԵՐ ԱՉՍ

ԾԱՆՕԹ.- Երթելը ապահովուած է օրոպիւ- ներով, Պուրճ Համուտէն «Շաղոյեան» կեդր- նին, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Չալքային (Tico-Tico) ժամը 3:15ին եւ Աթիլիսան (Սիմիթեան շէ- քեր), կէսօրէ ետք ժամը 3:20ին:

**ՆՇԱՐ
ՄԵԹՆԸ՝ ԵՐԵՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ
ՄԵՍԻՆ**

Երեսփոխան Ալյէր Մուխայպէրի մա- հով թափուր մնացած Մեթնի յոյն ուղղա- փառ աթոռին համար ընտրապայքարը սկսած է դանդաղ թափ ստանալ:

Մեթնը, որ կը յատկանշուի իբրեւ զուտ քրիստոնէական շրջան, միշտ այ գրաւած է յուսարձակները, շահագրգռած է բազմա- թիւ կողմեր, ընդ որում նաեւ մեր համայն- քը: Այսօր այ նոյնն է պարագան անշուշտ: Թէեւ մասնակի, սակայն յայտնապէս հե- տաքրքրական պիտի ըլլայ այս ընտրու- թիւնը, տարբեր պատճառներով:

Հալի ամիս մը կը բաժնէ մեզ ընտրու- թեան թուականին եւ ցարդ պաշտօնապէս երկու թեկնածուներ միայն կատարած են համապատասխան յայտարարութիւն: Կը շրջին նաեւ այլ անուններ, որոնք սակայն տակաւին պաշտօնապէս թեկնածութիւն չեն դրած:

Շահագրգռուած բոլոր համայնքներուն, որոնց շարքին բնականաբար նաեւ հայ հա- մայնքին համար, մասնակի այս ընտրու- թիւնը ձեռով մը պիտի ըլլայ բազմերակի շօշափում՝ յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն համար, որոնք տեղի պիտի ունենան 2005ին:

Լիբանանեան բանաւոր թէ գրաւոր մա- մուլը Յունիս 2ր կը նկատէ հաւանական թուականը ընտրութեան: Ասինք՝ ընտրա- պայքարը սկսած է թափ ստանալ, ներկա- յիս առաւելաբար տեղեկատուական մար- փին մէջ: Անշուշտ էր տուեալները յստա- կանան աւելի, բոլոր թեկնածուները պաշ- տօնապէս յայտարարեւ իրենց թեկնածու- թիւնը ու մասնաւոր էր ներքին գործոց նախարարութիւնը յայտարարէ պաշտօնա- կան թուականը, մենք տակաւին շատ աւելի յայն ու խոր վերլուծումներով կ'անդրա- դառնանք Մեթնի ընտրութեան կ'արձագան- զենք «Նախար» օրաթերթի հրապարակած այն տուեալներուն, ըստ որոնց՝ Մեթնի մէջ մարտին համայնքի քուէներէն ետք կու գան հայոց քուէները, շուրջ 17 հազար, որ կը կապմէ ընդհանուր քուէարկողներուն 27 առ հարիւրը:

Այժմ այսքան միայն, մնացեալը՝ յաջորդի:
ՀՐԱԶ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենյակը ամեն օր առաւօտեան ժամը 9:00էն կէսօրէ ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:

- 1) Հիւանդանոցային առողջապահութիւն (ուիզա- րա եւ պետական հիւանդանոցային բուժում):
- 2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տամաճ):
- 3) Ծանր եւ երկարատեւ բուժման կարօտ հիւան- դութիւններու դեղորայքի ապահովում:
- 4) Գաղթականներու նախարարութեան հետ առըն- չուող հարցեր:
- 5) Բնակարանային հարցերու նախարարութեան (խթմ) դիմումներ:
- 6) Աշխատանքի նախարարութեան հետ առընչուող հարցեր:
- 7) Քաղաքապետութիւններու հետ կապուած հար- ցեր:
- 8) Ընդհանուր Ապահովութեան Ապասարկութեան (ԱճՄ Էլ ԱճՄ) հետ կապուած հարցեր:
- 9) Դատական եւ իրաւաբանական հարցերու մա- սին խորհրդակցութիւն եւ ցուցումներ:

Դիմողները պէտք է ներկայանան «Ճաղգոյեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասեն- յակ եւ կամ նախքան ներկայանալը հետաձայնել 01 - 259881 եւ 01 - 242582 թիւերուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԳՐԱՍԵՆԵԿԱ

ԼՕՆԻ
«ՆԱՅԻՐԻ»
ՄԱՍՆԱԾԻԳ

ՄԱՍՆԱԾԻԳԻ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ
40ԱՄԵԿ
ԵՒ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՅ
ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ՝
ԼՕՆԻ ՇՐՁՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Նախագահութեամբ՝
ԸՆԿԵՐՈՒԿԻ ԱՆՇԷԼ ԱՊՈՒՆՃԵԱՆԻ

Կազմակերպութեամբ՝
**ԼՕՆԻ «ՆԱՅԻՐԻ» ՄԱՍՆԱԾԻԳԻ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**


Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 8 Մայիս 2002ին, առաւօտեան ժամը 10:00էն սկսեալ Hotel Monroeի շքեղ սրահին մէջ:

**ԸՄՐԱ ՏԻԳՐԱՆ
ՂԱՏՈՐԱ
ԸՆԴ
ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՍԷ
ԸՆԾԻՇԵԱՆ**

Նշանուած
27 Ապրիլ, 2002


STUDIO
Lantern

● Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ
Հեռ. 01-268866
եւ 03-695399



ՄՆՆՊԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնալու Գաղտնիքները



«Ամենից ապահով պատասխանը սօր գիրկն է»:

ԺԱՆ ՓԻԵՆ ԲԼԱՐԻՍ ՏԵ ՖԼՈՐԻԱՆ «ՅԱՊԼ»

Մոր ու գաւազան միջին գոյուկներն ունեցող կապը չի կտրուի, երբ փոքրիկը արգանդէն դուրս կու գայ, եւ պորտալարը կը կտրուի: Ընդհակառակը, այդ կապը կը շարունակուի, երբ մայրը թեւեթեւ մէջ կը գրկէ կեանքի կոչուած այդ հրաշքը եւ կը դիտէն զայն: Այս պարզագոյն սնունդ մը չէ մանուկին համար, այլ հողեքանական, զգացական եւ ֆիզիքական պէտք մը՝ մանուկին եւ սօրը համար:

Գոյուկներն միջինաւոր տարիներու ընթացքին, մարդը, այլ ստնաւորներու նման, իր գաւազան սնուցած է սօր հարազատ կաթով: Այս օրերուն, սակայն, «արդիականութիւնը» պատճառ կը դառնայ, որ շատեր հրաժարին անկէ:

սնունդն է մանուկին համար, որովհետեւ դարձու հարցը վարակիչ հիւանդութիւնները չեն, այլ՝ անբաւարար սննդառութիւնը:

Բժշկական եւ առողջապահական բոլոր հաստատութիւնները կը շեշտեն դիտման անհրաժեշտութիւնը: Անոնք կ'ըսեն, թէ մանուկը ծնունդէն մինչեւ վեցէն տասներկու ամիսներ պէտք է մօրմէն կաթ ստանայ: Մօր կաթը անհրաժեշտ է մանուկին անձնաւ եւ անոր օրկաններուն կազմաւորման համար: Մանուկը իր կեանքին առաջին տարիներուն արագօրէն կ'աճի: Անոր ծանրութիւնը կը կրկնապատկուի ծնունդէն երկու ամիս ետք, իսկ կ'եռապատկուի մէկ տարեկանին:

ՄԱՅՐԸ

Առաջին վեց ամիսներուն, կաթ տուող մայրը, օրական կրնայ տալ 750 մլ. կաթ, իսկ տարւած վերջին ամիսներուն՝ 600 մլ.: Մայրը յաւելելով 500 ջերմութի պէտք ունի կաթ տուած ժամանակաշրջանին: Հետեւաբար ան պէտք է ուտէ սննդարար ուտելիքներ: Այս շրջանին ան պէտք չէ հետեւի իր ծանրութիւնը նուազեցնող սննդականոնի, որովհետեւ անիկա պատճառ կը դառնայ արտադրելիք կաթին նուազեցում: Մայրերը պէտք է խմեն օրական 2,5-3,5 լիթր հեղուկ: Սոխ կամ սխտոր ուտելը յանձնարարելի չեն, որովհետեւ անոնք կրնան կաթին համը փոխել:

Կարգ մը նշումներ՝ վստահ ըլլալու համար, որ նորածին մը բաւարար կաթ կը ստանայ:

- 1.- Կռէ մանուկը, որպէսզի գիտնաս, թէ ծանրութիւնը աւելցած է, թէ ոչ: Մօր կաթը ստացող մանուկին համար հարիւրէն երկու հարիւր կրամ ծանրութիւն ստանալը մէկ շաբթուան ընթացքին կամ կէս քիլոկրամը մէկ ամսուան ընթացքին, բաւարար է:
- 2.- Արտաքսման եղանակը կամ թաց շորը ցոյց կու տայ, որ մանուկը բաւարար կաթ կը խմէ: Առաջին ամիսներուն օրական պէտք է, որ վեցէն ութը թաց շոր եւ երեքէն հինգ անգամ արտաքսուած տեղի ունենայ:
- 3.- Մանուկը երկարելով խմցուր կաթը:
- 4.- Սովորութեան վերածէ նախքան դիտելու մը գաւաթ մը շուր կամ օշարակ խմելու:

Միջազգային Առողջապահութեան կազմակերպութիւնը կը յանձնարարէ, որ աշխատող մայրերը նուազագոյնը չորս ամիս կաթ տան իրենց մանուկներուն: Նուազ զարգացած երկիրներու մէջ մայրեր իրենց գաւազանները կը դիտեն մէկուկէս կամ երկու տարի: Ասիկա սակայն, առողջապահական չէ սօր եւ գաւազանին համար:

Ըստ «Ամերիքըն Աքստեմի օֆ Փետրիաք-րիքս»ի, կաթը պէտք է ըլլայ միակ սնունդը առաջին վեց ամիսներուն, սակայն, երբ վեց ամսու ըլլայ մանուկը, կաթը առանձին բաւարար չ'ըլլար: Կամաց-կամաց ցորենի եւ այլ ուտելիքներու պէտք է վարժեցնել մանուկը:

ԻՆՉՈՒՐ ԳԻԵՅՈՒՄԸ ԿԸ ՆՈՒԱԶԻ

- Վերջին տասնամեակներուն դիտելով նուազեցած պատճառներ կը նկատուին՝
- 1.- Քաղաքներու դրութեամբ ապրելաձեւի յառաջդիմութիւնը:
 - 2.- Աշխատող մայրերու պարագան:
 - 3.- Հիւանդութիւններու եւ անհանգստութիւններու բազմացումը:
 - 4.- Մանուկներուն համար պատրաստուած կաթերու մեծ արդիւնաբերութիւնը:
- Դիտման անհրաժեշտութիւնը կը կայանայ ոչ միայն մանուկին սնունդը ապահովելու, այլ՝ մօր եւ մանուկին միջեւ ամուր կապի հաստատման մէջ: Մօր կաթը մանուկը կը պաշտպանէ ախտերէ եւ վարակիչ հիւանդութիւններէ:
- Տնտեսական նկատառումներ երբեմն պատճառ կը դառնան, որ դիտելու քաղաքներու օրինակ, Ասիոյ մէջ, եթէ մայրեր իրենց մանուկները սեփական կաթով չ'ընդունեն, տնտեսութիւնը պէտք է հայթայթէ վաթսուս միջին կովու կաթ՝ բաւարարելու համար կաթի պահանջը: Մօր կաթը ամենից անհրաժեշտ

ՄՕՐ ԿԱԹԸ

Մօր քնախօսական եւ հորմոնային կազմաւորումը մարմինը կը պատրաստէ կաթ արտադրելու: Այս շրջանը զգալուն շրջան մըն է սօր համար: Երկարատի ջղախիւ միջնորոտը եւ փոքր նեղութիւնները կրնան ժխտական ազդեցութիւն ունենալ սօր վրայ: Հետեւաբար պէտք է ուշադիր ըլլալ եւ հանդարտ մնալ:

Մննդաբերութեան ետք մօր կուրծքէն կը հոսի դեղին գոյն ունեցող հեղուկ մը, որ կը կոչուի քոլոստրում (colostrum), որմէ ետք կը սկսի հասունացած կաթի հոսքը: Քոլոստրումը իր մէջ կը պարունակէ հիւանդութեան պաշտպանող տարրեր, արեան ճեղքով զնդիկներ, ջուր, ճարպ, հանքանիւթեր, կենսանիւթեր, քարպոնիտներ եւ բաւարար քանակութեամբ սպիտ:

Մօր կաթը իր մէջ կը պարունակէ սնունդի յատուկ տեսակներ, զորս ինք շուկայի պատրաստ կաթը չի կրնար հայթայթել: Մօր կաթին հայթայթած սնունդը միանալով մարսողութեան էնզայմներու իւրապատկութիւնը մը կու տայ կաթի բովանդակութեան: Այս կաթին մէջ կը գտնենք մեծ քանակութեամբ մակնեղով, ինչ որ կ'օգնէ մանուկին աճման: Կայ նաեւ բարձր քանակութեամբ երկաթ: Մօրը կաթով մանուկը բաւարար սնունդ կը ստանայ:

ԿԱԹ ՏՈՒՈՂ ՄԱՅՐԵՐՈՒ ՄԱՆՈՎԱԿԱՆՈՒՆ ԶՈՒՅԱԿ

- Ընդդէմէններ/ նշալի տեսակներ - 12 անգամ - 1 շերտ հաց, կէս գաւաթ փաւր, 1/3 գաւաթ բրինձ, կէս գաւաթ զետնախնձոր:
- Պտուղներ - 4 անգամ - 1 միջակ պտուղ, կէս գաւաթ պտուղի ջուր:
- Կանաչեղէններ - 3 անգամ - կէս գաւաթ առանց նշալի կանաչեղէն, 1 գաւաթ թարմ կանաչեղէն:
- Սպիտոձ ճաշեր - 6 անգամ - 30 կրամ միս կամ քիչ ճարպ պարունակող պանիր, կէս գաւաթ եփած լուբիա, 1 հակիթ:
- Կաթնեղէններ - 4 անգամ - 1 գաւաթ կաթ կամ մածոն (նախընտրելի է քիչ ճարպ պարունակող):
- Ճարպ - 5 անգամ - 1 թէյի դգալ կարագ կամ մայրնէզ, 1 շերտ խոզապուխտ, 15 կրամ սեբ պարունակող պանիր, 1/8 աւուքա, 5 ձիթապտուղ, 10 կաղինի տեսակ:

ԻՆՉՈՒՐ ԿԱՐԵՒՐ Ե ԳԻԵՅՈՒՄԸ

- Ա.- Մանուկին համար
- 1.- Ձայն կը պաշտպանէ շնչափողի եւ աղիքներու վարակումներէ:
 - 2.- Ականջի միջին բաժնի հիւանդութիւնները կը նուազեցնէ:
 - 3.- Ծաշերու հանդէպ ունեցած գերզգայնութիւններէ կը պաշտպանէ:

ԲԱՐԼԱ ԵԱՐՏԵԱՆԸ

Շար.ը՝ էջ 10:

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

- ☆ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ)
- Այսօր ճիշդ ժամանակն է ծրագիր մը իրագործելու: Եթէ այսօր չ'ըրիք ձեր սրտին խօսող այս աշխատանքը, վերջը ուշ կ'ըլլայ եւ կը գոչաք:
- ☆ **ՅՈՒՆ** (21 Ապրիլէն 21 Մայիս)
- Նիւթական հարցի մը առնչութեամբ շատ լաւ լուր մը պիտի ստանաք, ինչ որ պիտի ոգեւորէ ձեր օրը: Զանազան օգտագործել այս ուրախութիւնը:
- ☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)
- Ձեր գործին վերաբերեալ փնտրուած մը պիտի ընէք եւ պիտի հանդիպիք աճի մը, որուն վրայ լաւ տպաւորութիւն պիտի ձգէք: Ձեր նախագագուցումը պիտի իրականանայ, որովհետեւ պիտի շրջապատել լաւ մարդոցով:
- ☆ **ԽԵՅՅԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)
- Ձեր առողջութիւնը շատ լաւ է, նաեւ ձեր տրամադրութիւնը, մանաւանդ որ շատ հանդարտ էք այսօր, ու ձեր այս տրամադրութիւնը պիտի ազդէ նաեւ ձեր շրջապատին:
- ☆ **ԱՌԻՒՄ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
- Սիրոյ մարզին մէջ ձեր տրամադրութիւնը սքանչելի է: Դուք ձեզ պիտի զգաք երկինքի մէջ: Զանազան միջոց պահպանել այս տրամադրութիւնը:
- ☆ **ԿՈՅՄ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
- Օրը հանգիստ ու խաղաղ պիտի անցնի ձեր հարազատներուն հետ: Ձեզմէ իւրաքանչիւրը պիտի մտածէ իրմէ առաջ իր մերձաւորին երջանկութեան մասին:
- ☆ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
- Ձեր գործին վերաբերեալ տեսակցութիւն մը պիտի ունենաք անձերու հետ: Անոնց խօսքերը ձեզի համար պիտի ըլլան ուղիորդութիւն, ու բնաւ պիտի չ'ընդունաք այսպիսի օրոտու մը յիշատակը:
- ☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
- Ձեզի պիտի առաջարկուի տնտեսական կարգադրութիւն մը ընել: Հակառակ արտաքին երեւոյթին, հարցը ձեր ենթադրածէն շատ աւելի ձեռնուող պիտի ըլլայ: Ուրեմն մի՛ վարանիք գործի անցնելու:
- ☆ **ԱՂԵՂՆԱՒՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
- Շատ գոհ էք ձեր վիճակէն, որովհետեւ դուք ձեզ լաւ կը զգաք: Ասկէ աւելի լաւ զգացողութիւն կարելի չէ պատկերացնել: Օրը յարմար է կարգ մը գնումներու:
- ☆ **ԱՅՍԵՂՁԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
- Ձեր անձնական կեանքին թէ ընտանեկան առօրեային մասին լաւ կը մտածէք եւ լաւ հոգ կը տանիք:
- ☆ **ՄՈՎԱԿԱՆՅՈՒՆ** (21 Յունուարէն 19 Փետրուար)
- Ձեր հոգեւոր պիտի ներկայացնէք աճի մը, որ պիտի կարենայ հասկնալ ձեզ եւ բարձրացնել ձեր բարոյական կորովը խնդրանքներով ձեզ երկար:
- ☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)
- Աշխատանքի պահուել մէկը պիտի գողնայ ձեր գաղափարը: Բոլորն ալ պիտի կարենան օգտուիլ այդ գաղափարներէն եւ շնորհակալութիւն յայտնել ձեզի: Ձեր կարգին գոհ պիտի մնաք:

ՕՐԱՏԵՏՐ

ԸՆՈՒՏԵՍԻԼ

Panasonic

Թ.Է.Լ. 10:00- Մապաի 13:00- Մաքու չափ

14:00- Եւրոպայի 14:30- Լուրեր 15:00- Մըն էսուլ

17:00- Պէս սէլըր 18:00- Երբի հոյս 19:30- Արաք. լուրեր 20:00- Արաքական ֆիլմ. 21:00- Միջին 22:00- Ամերիկեան ֆիլմաշար 23:00- Սի չէյն

Է.Ս. Թ.Վ.Ի. 7:30- Թելի մաթէն 9:30- Բիլի 10:30- Քի է քի 11:00- Ուս թրնի 11:30- Քոյ մէյլէ այլէ 12:00- Էմ. Թ.Վ. պիտրոց

12:30- Էս. Լ. Շ. 13:00- Մարիա Մեյքեր 14:00- Տարիալ ֆրանս 2 14:45- Սի. Էս. Էս. լուրեր 15:15- Արաքի աղանի 16:30- Փոքրէն 17:00- Միջին սթիտի 17:45- Թ.Վ. Վ.Ի. 18:45- Էսանդրատ 20:00- Արաքերէն լուրեր 20:30- Ամերիկեան ժապաւէն «Ճիր»

23:30- Ուշալալ 00:00- Մարտ 20

Է.Լ. Պ.Ս. 7:00- Պ.Ս. Էս. Էս. ի լուրեր 7:30- Լէրի Բիլի Լայլ 08:00- Սի. Էս. Էս. տիւ մըրնիկ 08:30- Մա ըլաք ըլլա չայֆա 09:00- Տիփոնէր յայտն 09:30- Մարգական 10:00- Էլիք մտա 10:30- Նախարար սայիտ 14:00- Էսանդրատ 15:00- Լուրեր 15:15- Ինքս Ուս անա 16:15- Տարապէր 17:00- Ըտիպ ուս քրպահ 17:30- Կենդանի գծանկար 18:00- Տիֆիմու 18:00- Տիֆիմու 19:00- Տիֆիմու 20:30- Նուրա

20:00- Արաքերէն լուրեր 20:30- Ել մուկիյուս 21:30- Պասքէպոլ 23:55- Հէյք սար 00:00- Տիֆիմու «Զէմփիլըն Լիկ»

ՄՈՒՍՏԱԵՊԱԼ 7:00- Լուրեր 9:00- Ալաճ ալ սապահ

13:00- Յիշ ինֆո 14:00- Անգլերէնով լուրեր 14:20- Տրանսլեյնով լուրեր 14:40- Հայերէնով լուրեր 15:05- Լուրեր 15:30- Արաքական ֆիլմաշար 16:30- Թելիքապիկ 17:00- Ըզդար ըքպար 17:30- Պիլ սայ 18:00- Արաքական ֆիլմաշար 19:00- Ալ ֆաի 20:00- Արաքերէն լուրեր 20:30- Ռուսուլ մուրախարիտա մայիլուս 20:35- Մէն սաւարպահ մայիլուս 21:30- Խալիք պըլպէշ 23:30- Ալ ֆաի

Է.Ս. Պ.Ս. 13:00- Լուրեր 14:00- Վաւերա-գրական 14:30- Թախիք ալ էսուլ 15:00- Լուրեր 16:00- Պիրուի դիատիյա 17:30- Սիւնալ /35 mm 18:00- Նո քոմէնթ լուրեր 18:15- Ֆէշն ին 19:00- Լուրեր 20:00- Մըն Մապաիիա 20:30- Պի թաժարոտ 22:00- Մասաիէա 23:00- Թախիք ալ էսուլ 23:30- Մարգական լուրեր 00:00- Լուրեր

ԼՈՒԹ.Վ.Ի. 7:30- Լուրեր 8:00- Մապահ էլ ուարտ 12:30- Սէնթ Թրոֆէյ 13:30- Տեղական ֆիլմաշար 14:00- Լուրեր 15:00- Վաւերագրական 16:30- Կենդանի գծանկար 17:00- Ամերիկեան ֆիլմաշար 18:00- Մարիալ մուր 19:30- Լուրեր 20:30- Նուրա

ԽԱՉԲԱՆ ԹԻՒ 5136

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՋԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՇՈՒԴՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵԱՆ
1. Հայրենադարձութիւն - Ստինք:	1. Լիբանանահայ մամուլէն - Ժլատ:
2. Լ. Օ. Խաչի մասնա-ծիղերէն - Դեղձի չիր:	2. Աղիքներու մէջ ապրող երկայն որդի-իրաքեան լրատու գործակալութիւն:
3. Ալբուրեհէն - Պատմիչ Ստեփանոս Տարօնցի:	3. Դրկից գիրքեր - Ժխտական մասնիկ - Ստացական աճական:
4. Իգական օտար անուն - Խաչիսա:	4. Մանանայ - Կարող:
5. Ժամանակի միակ-ւոր - Մուկերու ծուղակ:	5. Յաւի ճիւղ - Նայ-լածք:
6. Առարկայ - Տերե-փուկ - Ո՛չ հուժ, ո՛չ եփած:	6. Բագրեւանդ գաւա-ռի կեդրոնը:
7. Կողմ - Փայտփոր թռչուն - Տարածքի միակողմ:	7. Սկահակ - Տանիք:
8. Բալուլ, խանձա-րուր:	8. Չոյք (հակ.) - Շաղ-կապ (հակ.) - «Չօրաւոր» խաղաթուղթ:
9. Կոնարբեր ծառ - Մասնիկ - Բոյն:	9. Զիրք - Չօրաբարէ-լի որդի:
10. Անմեղ - Ողիմպիական «դեղին» ցամաքա-մասը:	10. Ուղիղ, պարկեշտ (հակ.) - Մայրատ՝ ժապա-ւէն:
11. Ռամօրէն՝ այո՛ - Կրկնուած բաղաձայններ - Ծոկան:	11. Մորթի շինուած պարկ - Տիրանեպ:

ԹԻՒ 5135

ԽԱՉԲԱՆԻ

ԼՈՒԹՈՒՄԸ



	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
2	0	1	2	3	4	5	6	7	8	9	10
3	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
4	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
5	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
6	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
7	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
8	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
9	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
10	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
11	9	10	11	12	13	14	15	16	17	18	19

* Վերոյիշեալ յայտա-գիրքները ենթակայ կրնան ըլլալ որոշ փոփոխութիւններու:

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՊԱՍԵԹՊՈԼ ԱՍԻՈՅ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՍԱԺԷՍ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ

Քուլալա Լամպուրի մէջ (Մալեպիա) տեղի ունեցող Ասիոյ ակումբներու պիտակաւորութեան 13րդ մրցաշարքին իր կատարած առաջին մրցումին, Սաժէս, որ մաս կը կապ մէ Ա. խմբակին, երէկ կէսօրէ ետք 102-89 արդիւնքով պարտութիւն մը կրեց Իթթիհաւտէն (Սէնուական Արաբիա), որ անցեալ տարուան տիտղոսակիրն էր:

Սաժէսի այսօրուան մրցակիցն է Սանկլու Ֆիւնիքս (Հարաւային Քորէա):

Սուրիական Ուսիտէ խումբը, որ իր կարգին երէկ կատարեց իր առաջին մրցումը, Պանժապի բանակի հաւաքականին դէմ (Հնդկաստան), կէտերու մեծ տարբերութեամբ յաղթանակ մը արձանագրեց, 161-61:

ԱՅՍՈՐ ԵՒ ՎԱՂԸ՝ ԿԻՍԱԿԱՐՏԱԿԱՆԻ ԴԱՐՁԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

«ՉԷՄՓԻԸՆՉ ԼԻԿ»-ի ֆուտբոլի մրցաշարքին կիսաւարտական հանգրուանի դարձի մրցումներուն, այսօր Պայէր Լեւերքուզըն իր դաշտին վրայ կը հիւրընկալէ Մանչեսթըր Ետուսթըրտը, որուն հետ երթին անոր դաշտին՝ «Օլտ Թրեֆորտ»-ի մէջ 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրած էր:

Կիսաւարտականի երկրորդ ճակատումը տեղի կ'ունենայ վաղը՝ Չորեքշաբթի, ուր Ռէալ Մատրիտ իր դաշտին՝ «Սանթիակո Պեռնապետ»-ի մէջ կը հիւրընկալէ Պարսելոնան: Երթին, մայրաքաղաքի կազմը 2 - 0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած էր:

Մանչեսթըրի մարզիչ Ալեքս Ֆերկրան մրցումին նախօրեակին կը յայտնէ, թէ այժմ վերաւոր Տէյվիտ Պեթսամ յա-

ՊՈՒՆՏՆԱԿԱ

ՏՈՐԹՄՈՒՆՏ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԸ ԽԼԵՑ ԼԵՒԵՐՔՈՒՉԸՆԷՆ

Գերմանիոյ ֆուտբոլի ֆուտբոլի ֆեդերատիան (Պոկա-տրախիա) 33րդ եւ նախա-վերջին հանգրուանի մրցումներուն, Պորուսիա Տորթմունտ կարեւոր քայլ մը առաւ դէպի տիտղոս, երբ 4 - 3 արդիւնքով յաղթանակ վերադարձու-լէ ետք Համպուրիի դաշտին, գրաւեց պարագու-խի դիրքը, մէկ կէտի առաւելութիւն մը ունենալով Պայէր Լեւերքուզընի վրայ, որ 1 - 0 արդիւնքով պարտուած հեռացաւ Նիւրեմպէրկի դաշտէն (15րդ) եւ նահանջեց 2րդ դիրքը:

Տիտղոսին տիրանալու համար, այժմ Տորթմունտ անպայման յաղթանակի մը պէտք ունի, ինչ որ ալ ըլլան Լեւերքուզընի եւ Պայէր Լեւերքուզընի կատարելիք մրցումներուն արդիւնքները:

34րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն, Տորթմունտի մրցակիցն է Վերտըր Պրեմըն, Լեւերքուզընի մրցա-

Ստորեւ՝ դասաւորումը.

1.- Արթուր Մատրիտ	46Տ
2.- Ռասիոն Սանթամար	72
3.- Էքսերէս	66
4.- Ռեքոնքիս Լուիս	63
5.- Ռէալ Օվիեո	60
	58

ԼԵՎԱՍՄ

ՇԱԲԱԹԱՎԵՐՁԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՆՔՆԵՐԸ

Անցեալ շաբաթավերջին, Լ. եւ Ս. Յակոբեան քուէ-ճի դաշտին վրայ տեղի ունեցան Հ. Մ. Լ. Մ. Ի ԼԵՎԱՍԻ պասթիֆուլի մրցումները, որոնք տուին հետեւեալ արդիւնքները.

ՇԱԲԱԹ. 27 ԱՊՐԻԼ

Թորոսեան - Լ. եւ Ս. Յակոբեան (միջակ տղաք) 33-19

Լ. եւ Ս. Յակոբեան - Դպրեվանք (մեծ տղաք) 82-37

Ճեմարան - Շամբեան-Թարթիկեան (մեծ աղջիկներ) 42-10

Ս. Հոփսիմեանց - Շամբեան-Թարթիկեան (մեծ տղաք) 53-36

ԿԻՐԱԿԻ. 28 ԱՊՐԻԼ

Լ. եւ Ս. Յակոբեան - Քաղաքի Հայ. Աւետ. քուէն (մեծ տղաք) 62-54

Լ. եւ Ս. Յակոբեան - Ս. Քառասնից Մանկանց (միջակ տղաք) 31-13

Ս. Բ. Վ. - Դպրեվանք (մեծ տղաք) 59-14

Ս. Խանամիրեան - Գ. Կիւլպէնկեան «Յառաջ» (միջակ տղաք) 36-19

Մեքրոպեան - Գ. Կիւլպէնկեան «Յառաջ» (մեծ աղջիկներ) 35-33

Ս. Խանամիրեան - Ս. Հոփսիմեանց (միջակ աղջիկներ) 35-26

Մեքրոպեան - Շամբեան-Թարթիկեան (մեծ տղաք) 49-25

Ճեմարան - Ս. Հոփսիմեանց (մեծ տղաք) 41-40

«ՉԷՄՓԻԸՆՉ ԼԻԿ»

ԱՅՍՈՐ ԵՒ ՎԱՂԸ՝ ԿԻՍԱԿԱՐՏԱԿԱՆԻ ԴԱՐՁԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

«ՉԷՄՓԻԸՆՉ ԼԻԿ»-ի ֆուտբոլի մրցաշարքին կիսաւարտական հանգրուանի դարձի մրցումներուն, այսօր Պայէր Լեւերքուզըն իր դաշտին վրայ կը հիւրընկալէ Մանչեսթըր Ետուսթըրտը, որուն հետ երթին անոր դաշտին՝ «Օլտ Թրեֆորտ»-ի մէջ 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրած էր:

Կիսաւարտականի երկրորդ ճակատումը տեղի կ'ունենայ վաղը՝ Չորեքշաբթի, ուր Ռէալ Մատրիտ իր դաշտին՝ «Սանթիակո Պեռնապետ»-ի մէջ կը հիւրընկալէ Պարսելոնան: Երթին, մայրաքաղաքի կազմը 2 - 0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած էր:

Մանչեսթըրի մարզիչ Ալեքս Ֆերկրան մրցումին նախօրեակին կը յայտնէ, թէ այժմ վերաւոր Տէյվիտ Պեթսամ յա-

ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐՍԵՆԱԼ 5 ԿԵՏԻ ԱՌԱԻԵԼՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑԱԻ ՄԱՆՉԵՍԹԵՐԻ ՎՐԱՅ

Անգլիոյ ֆուտբոլի ֆուտբոլի ֆեդերատիան յետաձգ-ւած մրցումի մը, Արսենալ 2-0 արդիւնքով յաղթանակ վերադարձուլէ ետք Պոլսընի դաշտէն, մեծ քայլ մը առաւ դէպի տիտղոս, որուն վերջին անգամ տիրացած էր 1998ին: Լոնտոնեան կապիտէն Էրիկ Կլիւերը նշանակեցին Ֆրետրիք Լիուսկայերկ (36րդ) եւ Սիլվէն Ուիլթորտ (44րդ):

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, Արսենալ այժմ հինգ կէտի առաւելութիւն ունեցաւ 2րդ դիրքը գրաւող Մանչեսթըր Ետուսթըրտի վրայ: Ուր օր ետք, եթէ Արսենալ միայն հաւասարութիւն մը արձանագրէ «Օլտ Թրեֆորտ»-ի մէջ, պիտի հանդիսանայ պիտակաւոր:

ՊՈՒՆՏՆԱԿԱ

ՏՈՐԹՄՈՒՆՏ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԸ ԽԼԵՑ ԼԵՒԵՐՔՈՒՉԸՆԷՆ

Կիցը՝ Հերթա Պերլին, իսկ Պայէր Լեւերքուզընը՝ Հան-գա Ռոսթը:

Վերջին երեք դիրքերը գրաւող խումբերուն, Ֆրայպուրկի, Քէօլնի եւ Չանքըֆ Փաուլիի համար տարելիք մրցումներուն:

Ստորեւ՝ 33րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Վոլֆսպուրկ - Պայէր Լեւերքուզըն	0-1
1860 Միւնխի - Շթուրպարթ	3-3
Քայզերսլաութըն - Քոթպուս	4-0
Քեօլն - Ֆրայպուրկ	2-0
Համպուրկ - Պորուսիա Տորթմունտ	3-4
Վերտըր Պրեմըն - Չանքըֆ Փաուլի	3-2
Նիւրեմպէրկ - Պայէր Լեւերքուզըն	1-0
Հերթա Պերլին - Շալքէ	2-0
Հանգա Ռոսթը - Պորուսիա Մեօնընկլապախ	1-1

ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

1.- Պորուսիա Տորթմունտ	46Տ
2.- Պայէր Լեւերքուզըն	67
3.- Պայէր Լեւերքուզըն	66
4.- Հերթա Պերլին	65
5.- Շալքէ	61
	61
.....	
15.- Նիւրեմպէրկ	31
16.- Ֆրայպուրկ	27
17.- Էլտըն	26
18.- Չանքըֆ Փաուլի	22

ՂԱԶԱՍՏԱՆԵՆԻ ԵՆԻ. Է. ԷՖ. Ա.Ի 52ՐԴ ԱՆԴԱՄԸ

Անցեալ շաբաթավերջին, Են. Է. ԷՖ. Ա.ին 52րդ անդամը դարձաւ Ղազախստան, որ մինչ այդ իր մասնակցութիւնը կը բերէր միայն ասիական մրցաշարքերուն:

Թէեւ յստակ չեղաւ, թէ արդեօք ի՞նչ պատճառներով է, որ Ղազախստան կը միանայ Են. Է. ԷՖ. Ա.ին, սակայն մէկ բան յստակ է, որ անկա կը դառնայ Են. Է. ԷՖ. Ա.ին նոր անդամը:

Յ.Ս.Ը.Ս.Ի ՖՈՒԹՊՈԼԻ ՅԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Հ.Ս.Ը.Ս.Ի համակիրներու յանձնախումբը Հ.Ս.Ը.Ս.Ի ֆուտբոլի պիտակաւորները կը հրաւիրէ արտքայլ արդիւնք - հանդիպումի մը՝ խումբին պատասխանատուներուն եւ կրտսեր խումբերու մարզիչներուն հետ:

Հանդիպումը տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 30 Ապրիլ երեկոյեան ժամը 8:00ին, Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան քուէճի արահին մէջ, Պուրձ Համուտ:

● Բոլորիդ ներկայութիւնը խիստ փափաքելի է:

ԹԵՆԻՍ

ՊՐՈՒԿԵՅՐԱ ԼԲԵՑ ԱՍՊԱՐԵՁԸ

Երկու անգամ Ֆրանսայի թենիսի բաց մրցաշարքին (Ռոլան Կարոս) տիտղոսին արժանացած (1993ին եւ 1994ին) սպանացի Սերկէյ Պրուկէյըրա լեքեց սպարէզը, շուրջ 15 տարի իր բեւարհեցողութեամբ պայքարելէ ետք:

Պրուկէյըրա, որ իր սպարէզին ընթացքին շահած է 14 միջազգային տիտղոսներ, վերջին տարիներուն վերաւոր ըլլալով չկրցաւ այլ մրցաշարքերու մասնակցել եւ 31 տարեկանին այսպիսով վերջ կը դնէ իր սպարէզին:

«Թէեւ թենիսը կեանքս էր, բայց եկաւ ժամանակը, որ հեռանամ: Վստահաբար զիջաւոր պատճառը եղաւ վերաւորութիւնը» կ'ըսէ Պրուկէյըրա:

Ան վերջին անգամ ըլլալով իր մասնակցութիւնը բերաւ անցեալ շաբաթ Պարսելոնայի մէջ տեղի ունեցած թենիսի միջազգային մրցաշարքին, որուն ընթացքին ան Բ. Հանգրուանին պարտուեցաւ արժանութիւնը Կիլիերմօ Քանսալէ (դասուած՝ 5րդ):

Պարսելոնայի այս 50րդ մրցաշարքին տիտղոսին տիրացաւ արժանութիւնը Կասթիլ Կառուսի, որ ավարտականին 6 - 4, 6 - 0 եւ 6 - 2 արդիւնքով պարտութեան մատնեց սպանացի Ալպէր Քոսթան:



Կասթիլ Կառուսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՆԱԿ

ԿԻՍԱԿԱՐՏԱԿԱՆԻ ԶԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Հայաստանի ֆուտբոլի բաժնի մրցաշարքին քառորդ ավարտականի դարձի մրցումներէն ետք, որոնք տեղի ունեցան անցեալ շաբաթավերջին, յստակացան կիսաւարտական հանգրուան հասնող չորս խումբերը:

Երեւան «Սպարտակ», որ երթին պարտութիւն մը կրած էր «Արարատ»էն, 3 - 1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելէ ետք պահուցեց կիսաւարտական հանգրուանին իր տոմարը, ուր կը ճակատի Երեւան «Ձուարթնոց»ի դէմ, որ 4 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց «Տիւնա» - 2000՝ Երեւանը:

Կիսաւարտական հանգրուանի երկրորդ մրցումը տեղի կ'ունենայ «Փիւնիկ» Երեւանի եւ «Միքա» Աշտարակի միջեւ, որոնք յաջորդաբար մրցաշարքին դուրս ձգեցին «Բանանց» Երեւանը եւ «Շիրակ» Գիւմրին: Կիսաւարտականի այս մրցումները տեղի կ'ունենան յառաջիկայ շաբաթ: Իսկ Մայիս Գին տեղի կ'ունենայ Հայաստանի ֆուտբոլի գերբաժնի մրցումը Խոյսեան «Փիւնիկ»-ի եւ բաժնակիր «Միքա» Աշտարակի միջեւ:

ՍՓՈՐԹԻՆԿ ԼԻՉՊՈՆ՝ ՓՈՐԹՈՒԳԱԼԻ ԱԽՈՅԵԱՆ

Փորթուգալի ֆուտբոլի ֆուտբոլի ֆեդերատիան 33րդ եւ նախաւերջին հանգրուանի մրցումներուն, պարագու-լուսի դիրքը գրաւող Սփորթինկ Լիգայուն 2 - 2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Վիթորիա Սեթուալի հետ (12րդ), հանդիսացաւ 2001 - 2002 եղանակի պիտակաւոր: Իր արձանագրած այս հաւասարութեանէն ետք, անկա հինգ կէտի առաւելութիւն մը ունեցաւ 2րդ դիրքը գրաւող Պաուսթայի վրայ, որ 2 - 1 արդիւնքով պարտուած հեռացաւ Պենֆիլդի դաշտէն (4րդ):

Վերջին երեք դիրքերը գրաւող խումբերը, Սալկէյրոն, Ֆրանսէս եւ Ալվեքա փոխադրուեցան Բ. դասակարգ:

Ստորեւ՝ 33րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Ժիլ Վիտեյրա - Սալկէյրոն	3-2
Լէյրիա - Ֆրանսէս	4-1
Պէյրա Մար - Փարոս Ֆերեյրա	0-2
Վարզիմ - Մարիթիմ	0-1
Պենֆիլդ - Պաուսթայ	2-1
Փորթո - Սանթա Քլարա	5-3
Սեթուալ - Սփորթինկ Լիգայուն	2-2
Պէյնքենսէ - Պրակա	1-1

ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

1.- Սփորթինկ Լիգայուն	46Տ
2.- Պաուսթայ	72
3.- Փորթո	67
4.- Պենֆիլդ	65
5.- Պէյնքենսէ	63
	54
.....	
15.- Վարզիմ	32
16.- Սալկէյրոն	27
17.- Ֆրանսէս	25
18.- Ալվեքա	24

